

**ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՋ ՀԱՇՎԱՌՈՒՄ, ՓՈՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄ ԵՎ
ՀԱՇՎԱՌՈՒՄԻՑ ՀԱՆՈՒՄ**

ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄ	ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔ	ԺԱՄԿԵՏ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ	ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ
Անհատ ձեռնարկատիրոջ պետական հաշվառում	3000 ՀՀ դրամ (հաշվեհամար՝ 900005160750)	Անմիջապես 1) դիմում, 2) անձնագիր (անձնագիրը անձը նույնականացնելուց հետո վերադարձվում է), 3) պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթուղթ	-
Անհատ ձեռնարկատիրոջ մասին տեղեկությունների փոփոխությունների պետական հաշվառում	1500 ՀՀ դրամ (հաշվեհամար՝ 900005160750)	Անմիջապես 1) դիմում, 2) համապատասխան փոփոխությունը հավաստող փաստաթուղթ, 3) պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթուղթ	-
Անհատ ձեռնարկատիրոջը հաշվառումից հանելը	Պետական տուրք չի գանձվում	Անմիջապես 1) դիմում. 2) անձնագիր (անձնագիրը անձը նույնականացնելուց հետո վերադարձվում է):	Մահացած անհատ ձեռնարկատիրոջը հաշվառումից հանելն իրականացվում է շահագրգիռ անձի դիմումի համաձայն, որի համար ներկայացվում են որպես անհատ ձեռնարկատեր հաշվառված անձի նույնականացման համար բավարար ցանկացած տեղեկատվություն, մահվան փաստը հավաստող փաստաթուղթ և դրա պատճենը: Մահվան փաստը հավաստող փաստաթուղթը պատճենի հետ համադրվելուց հետո վերադարձվում է այն ներկայացնողին: Անհայտ բացակայող անհատ

			<p>ձեռնարկատիրոջը հաշվառումից հանելն իրականացվում է շահագրգիռ անձի դիմումի համաձայն, որի համար ներկայացվում են որպես անհատ ձեռնարկատեր հաշվառված անձի նույնականացման համար բավարար ցանկացած տեղեկատվություն և անհայտ բացակայող ճանաչելու մասին դատարանի որոշման պատճենը:</p> <p>Սնանկ ճանաչված անհատ ձեռնարկատիրոջը պետական հաշվառումից հանելու համար գործակալություն են ներկայացվում՝</p> <ol style="list-style-type: none">1) դիմում.2) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած որոշման պատճենը.3) իր կողմից տեղեկանք՝ «Արխիվային գործի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջների կատարման մասին:
--	--	--	---